Արձանագրություն N 3

<< ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-ԿՏՏվ/2023-Լ-36 >> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան *<< 15 >> << 03 >> 2023թ.*

ՕՐԱԿԱՐԳ.

ՀՀ ոստիկանության կարիքների համար համակարգիչների և համակարգչային պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-ԿՏՏվ/2023-Լ-36 ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-ԿՏՏվ/2023-Լ-36 ծածկագրով ընթացակարգին 1-ին չափաբաժնով որպես ընտրված մասնակից է ճանաչվում՝ «Արթուր Հարությունյան Սերյոժայի» ԱՁ–ն, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինները համարվում են չկայացած, քանի որ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են առկա ֆինանսական միջոցները, իսկ «ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնով ներկայացված հայտերում անհրաժեշտ էր հստակեցնել լազերային տպիչների տեխնիկական բնութագիրը հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան և ամբողջական լրացնել Հավելված 1.3–ը:

«ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից ամբողջական լրացվել է Հավելված 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, իսկ տեխնիկական բնութագրով պահանջվող շտկումները չի կատարվել, այլ փոխարեն կցվել է գրություն–պարզաբանում՝ հրավերի տեխնիկական–բնութագրի պահանջների վերաբերյալ:

«ՊՐՈ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնով ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հանձնաժողովը որոշեց՝

- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 42-րդ կետի, ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-ՀՊ-ԿՏՏվ/2023-Լ-36 ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «ՊՐՈ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 6–րդ կետը, «ՊՐՈ» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
- 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ չափաբաժինները համարվում են չկայացած՝ ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:
- 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվում՝ «Արթուր Հարությունյան Սերյոժայի» ԱՁ–ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
"Գնումների մասին" ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում «Արթուր Հարությունյան Սերյոժայի» ԱՁ-ին կառաջարկվի կնքել համակարգիչը ամբողջը մեկում ձեռքբերման գնման պայմանագիր:

Ընդունվեց որոշում՝ *կողմ 3 դեմ 0 :*

Հանձնաժողովի Նախագահ՝
ոստիկանության փոխգնդապետ Ա. Թամազյան

Հանձնաժողովի անդամներ՝
ոստիկանության փոխգնդապետ Մ. Բաբայան
ոստիկանության մայոր Շ. Հարությունյան

Քարտուղար՝
ՀՀ ՔՀԾ 1-ին դասի առաջատար ծառայող Լ. Սահակյան